

ԱՆԵՎՐՅԱԳՐԱԿԱՆ ՂԵՏԵՐՄԻՆԻՋՄԻ ՏԱՐՈՒՐՈ ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լ. Գ. ՍԱՅԱԿՅԱՆ

Յուրաքանչյուր պատմագիտական աշխատության փիլիսոփայական արժանիքները բացահայտելու համար նախ և առաջ պետք է պարզել, թե տվյալ երկը պատմագիտական ինչ ժանրի է պատկանում:

Գերմանական դասական փիլիսոփայության ականավոր ներկայացուցիչ Հեգելը, խոսելով պատմագիտական երկերի դասակարգման մասին, նկատել է, որ կան պատմական ստեղծագործություններ, որոնք չեն կարող ծավալով շատ մեծ լինել: Այն, ինչը գոյություն ունի նրան (պատմիչին) շրջապատող միջավայրում, կազմում է հեղինակի շարադրած պատմության բովանդակությունը¹: Համաձայնելով գերմանացի մտածողի հետ՝ կարծում ենք, որ նրա նշած պատմիչների շարքին պետք է դասել նաև XVII դարի հայ պատմագիր Առաքել Դավրիժեցուն:

Հայտնի է, որ Առաքել Դավրիժեցին², շարադրելով XVII դարի հայոց պատմությունը, իր առջև դրել էր որոշակի խնդիր՝ ներկայացնել 1602-1662 թթ. հայ ժողովրդի պատմական անցքերը, թեև հեղինակը հաճախ դուրս է եկել այդ սահմաններից: Այդ կապակցությամբ Հ. Միրզայանը գրում է. «Ընդունված էր ասել, որ Առաքել Դավրիժեցին գրել է միայն XVII դարի առաջին վեց տասնամյակների հայոց պատմությունը: Իրականում նա հաճախ (օրինակ՝ օսմանյան սուլթանների, հայոց կաթողիկոսների պատմությունը շարադրելիս և այլն) դուրս է եկել նշված շրջանակներից, ընդգրկել ավելի մեծ ժամանակահատվածներ»³: Ավելին, Դավրիժեցու գրքում հանդիպում ենք ինչպես ավելի ուշ, այնպես էլ առավել վաղ շրջանների վերաբերող տեղեկությունների: Այսպես օրինակ՝ Դավրիժեցու երկի ամենավաղ շրջանի տեղեկությունը վերաբերում է 561 թ., իսկ ամենաուշը՝ իր օրերին:

Հարկ է նշել, որ Դավրիժեցու Պատմությունը վերաբերում էր հայ ժողովրդի կյանքի բոլոր բնագավառներին՝ կրոնին, եկեղեցուն, քաղաքական ու տնտեսական կյանքին, մշակույթին, արվեստին, գիտությանը, փիլիսոփայությանը, պատմական ու եկեղեցական գործիչներին և այլն:

Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» երկի առանցքը Շահ Աբաս Ա-ի արշավանքներն է, նրա մղած պատերազմներն օսմանցիների դեմ և նվաճված տարածքների, առավելապես Արարատյան նահանգի ժողովրդի գերեվարությունը Պարսկաստան: Պատմագիրը մեծ տեղ է հատկացնում Հայաստանի, ինչպես նաև Պարսկաստանի և Թուրքիայի քաղաքական պատմությանը, մանրամասն պատմում է Հայաստանի տարածքում այդ երկու տերությունների ռազմական գործողությունների մասին: Դրան զուգահեռ՝ հեղինակը նկարագրում է նաև Շահ Աբաս Ա-ի մղած պատերազմները Վրաստանի դեմ և այդ երկրում նրա կատարած ավերածությունները:

Առաքել Դավրիժեցու երկի ուսումնասիրությունից հանգում ենք այն համոզման, որ այն բովանդակում է ոչ միայն XVII դարի առաջին կեսի պատմական իրադարձությունների ժամանակագրությունը, այլև կես դարից ավելի ընդգրկող պատմական ժամանակաշրջանը ներկայացված է խորը վերլուծությամբ, իմաստուն մեկնաբանություններով ու եզրակացություններով, ներկայի համար՝ արժեքավոր հետևություններով:

¹ Տե՛ս Գ. Վ. Փ. Գեղեյ, *Философия истории*, М., 1935, էջ 3-5:

² Առաքել Դավրիժեցու ծննդյան ստույգ թվականը հայտնի չէ, մահացել է 1670թ.:

³ Հ. Միրզայան, Առաքել Դավրիժեցու Պատմության առաջին հրատարակության մասին, «Բանբեր Երևանի Համալսարանի», 1971, № 2, էջ 192:

XVII դարի հայ պատմագիրը, շարադրելով պատմական իրադարձությունները, անցքերը, փաստերը, եզրահանգում է, որ գոյություն չունեն մեկը մյուսից անկախ «պատմական փաստեր»: Ամենապարզ փաստն անգամ իրականում ունի բարդ կառուցվածք, ինչը կարող է ճանաչվել միայն այլ գործընթացների ու իրադարձությունների համատեքստում: Դավրիժեցին կարողանում է բացահայտել ու ներկայացնել, որ եզակի փաստը տեսանելի և անտեսանելի թելերով կապված է ազգի ամբողջ պատմության ու մշակույթի հետ: Այլ կերպ ասած՝ Դավրիժեցու երկի պատմական անցքերի նկարագրությունները լույս փաստագրություններ չեն, թեև «պատմության փիլիսոփան միշտ էլ հենվում է էմպիրիկ պատմագրության վրա»: Պատմական իրավիճակի քննարկումը, որն իրականացվում է XVII դարի հայ ակնամպր պատմագրի կողմից, տալիս է նրան բոլոր հիմքերը գնահատելու նաև որպես խորաթափանց պատմիչ-փիլիսոփա:

Բանն այն է, որ հայ պատմագիրը պատմական փաստերը վերլուծելիս, ըստ էության, կատարել է փիլիսոփայական հարցադրումներ և ըստ այդմ արտահայտել մտքեր, որոնք, մեր գնահատմամբ, առնչվում են նաև «աշխարհագրական դետերմինիզմի» տեսությամբ: Ուստի Դավրիժեցու երկում առկա աշխարհագրական դետերմինիզմի տարրերի վերհանումը կնպաստի արժևորելու նրան նաև պատմափիլիսոփայության շրջանակներում: Ինչպես ժամանակին նկատել է Ռիկերտը, պատմական հետազոտությունը չի սահմանափակվում միայն մշակույթի երևույթներով, և երբ խոսքը պատմական իրադարձությունների պատճառների բացահայտման մասին է, «անհրաժեշտ է ուշադրություն դարձնել և այնպիսի օբյեկտներին, որոնք ամբողջովին վերաբերում են բնությանը, ... օրինակ՝ տեղանքի *կլիմայական* առանձնահատկություններին, երկրի *աշխարհագրական* դիրքին»⁴:

Փիլիսոփայության պատմության մեջ «աշխարհագրական դետերմինիզմի» հայեցակարգի հիմնադիր է համարվում XVIII դարի ֆրանսիական լուսավորականության ակնամպր ներկայացուցիչ Շառլ Լուի Մոնտեսքյուն, որն իր «Օրենքների ոգին» կոթողային աշխատության մեջ առաջ քաշեց մի ուսմունք, որի համաձայն աշխարհագրական միջավայրը, բնակլիմայական պայմանները մեծ ազդեցություն ունեն մարդկանց ֆիզիկական կառուցվածքի, սովորությունների, ավանդույթների, ապրելակերպի ու մշակույթի վրա:

Որոշելով աշխարհագրական միջավայրի դերը մարդկային համակեցության բարքերի ու օրենքների ձևավորման մեջ՝ Մոնտեսքյուն պնդում էր, որ կլիմայի տարբերությունը ծնում է զանազան պահանջմունքներ, ինչն էլ իր հերթին հանգեցնում է տարբեր ապրելակերպի, որից էլ բխում է տարբերությունը օրենքների մեջ⁵: Ավելին, ֆրանսիացի լուսավորիչը համոզված էր, որ «Կլիմայի իշխանությունը ուժեղ է բոլոր այլ իշխանություններից»⁶: Հետաքրքիր է, որ Մոնտեսքյոյի ժամանակակից իտալացի փիլիսոփա և սոցիոլոգ Ջ. Վիկոն նույնպես կարծում էր, որ կլիմայի տարբերության հետևանքով են ազգերը միմյանցից զանազանվում իրենց բնույթով, սովորություններով ու բարքերով⁷:

Նշեցինք, որ հայ ակնամպր պատմագրի երկում բավական մեծ տեղ է հատկացված Շահ Արասի օրոք իրականացված ժողովուրդների բռնի տեղահանման պատմական իրադարձությունների մանրամասն նկարագրությամբ: Հայտնի է, որ պարսից արքան ծրագրել էր ամառացնել ու անմարդաբնակ դարձնել Հայաստանի մի շարք շրջաններ, որպեսզի թուրքական զորքերը, Հայաստան ներխուժելով, մնան առանց սննդի, անասնակերի, օժանդակ աշխատուժի: Արևմտյան Հայաստանի մի մասի, Արարատյան աշխարհի ու հարակից գավառների ամբողջ հայությունը քշվեց Պարսկաստան: Անկարևոր չէ նաև այն հանգամանքը, որ Շահ Արասի՝ քրիստոնյաների նկատմամբ վարած քաղաքականության

⁴ Г. Рикерт. Философия истории. СПб., 1908, с. 118.

⁵ Նույն տեղում, էջ 69:

⁶ Տե՛ս Ս. Մոնտեսքյե, О духе законов, Избранные произведения, М., 1955.

⁷ Նույն տեղում, էջ 417:

⁸ Տե՛ս Դжамбаттиста Вико, Основания новой науки об общей природе наций, Москва-Киев, 1994, էջ 169:

հիմնական նպատակը ոչ միայն քաղաքական էր, այլև տնտեսական՝ Իրանում զարգացնել առևտուրն ու արհեստները: Դավրիժեցին այս կապակցությամբ գրել է. «Եւ քաժանեալ, տրոհեցին ի նոցունց *գրարագործ արուեստաւորսն* զամենայն, և տարան ի քաղաքն Սպահան վասն արուեստին, որ պիտոյանայր անդ ի գործս շինութեանց տան քազաւորին և *համօրէն ազգին Պարսից*»:

Ժողովուրդների բռնի տեղահանումը եղել է Շահ Աբասի քաղաքականության կարևոր կողմերից մեկը: Դավրիժեցին, հիշատակելով, որ պարսից արքան ժողովուրդների բռնագաղթ իրականացրել է մի քանի անգամ, գրում է. «*Եւ զայս գործ, որ զազն Հայոց քչեաց և տարաւ, ո՛չ թէ մի անգամ կամ երկիցս և երիցս արար և եկաց*, այլ զտի հաւաստեալ քազում արս՝ որք ինքեանք իսկ քշածք էին, յորոց հարցեալ տեղեկացայ, նա և ի յիշատակարանաց գրոց՝ գորս ընթերցայ, *զի եօթն և ութն անգամ որիչ որիչ զկնի միմեանց քչեալ և տարեալ է*»¹⁰ (ընդգծումը մերն է - Լ. Ս.):

Ուշագրավ է, որ նկարագրելով Շահ Աբասի ձեռնարկած զանգվածային վերաբնակեցման անմարդկային երևույթները՝ Առաքել Դավրիժեցին, խիստ դատապարտման ու քննադատության հետ մեկտեղ, կապ է տեսնում տվյալ երկրի աշխարհագրական պայմանների ու նրա բնակչության խառնվածքի, բնավորության գծերի, վարքագծի ու պահանջումների միջև: Բռնագաղթի հետևանքով տեղահանված ժողովուրդների կորստի հիմնական պատճառը Առաքել Դավրիժեցին համարում է աշխարհագրական միջավայրի, բնակլիմայական պայմանների փոփոխությունը: Հետաքրքիր է, որ Մոնտեսքյոյից ավելի քան կես դար առաջ հայ պատմագիրը կարողացել է վերհանել ու ներկայացնել աշխարհագրական գործոնների անմիջական ազդեցությունը մարդկանց բնական պահանջումներին, աշխատունակության, ինչպես նաև առողջական վիճակի ու ինքնագագացողության վրա:

Այսպես, նկարագրելով Շահ Աբասի իրականացրած հայ ժողովրդի բռնի տեղահանումը Պարսկաստան, Դավրիժեցին ցավով գրում է. «Զի յորժամ էր թուականն մեր Ռ.Կ.Է. միսանգամ հրամայեաց... քազաւորն առաջին Շահաբասն, վասն ազգին Հայոց արտասահման առնել զամենեսեան յԱտրպատական աշխարհէն, և վարել յաշխարհն Պարսից»¹¹: Ֆահրաբատ քաղաքում վերաբնակեցված հայերի մասին Դավրիժեցին նշում է, որ նրանք այնտեղ «*ոչ մնացին և ոչ աճեցին, այլ օր յաւոր պակասեալ և վատնեալ սպառեցան, վասն դաժան և մզոտառտ և վնասակար օդոյն, որում ո՛չ էին ընտեր*»¹²:

Մեջբերումից երևում է, որ Դավրիժեցին տեղահանված բնակչության թվի պակասելը պայմանավորել է կլիմայական կտրուկ փոփոխությամբ, որի հետևանքով էլ ազդը աստիճանաբար «սպառվել» է: Այլ կերպ ասած՝ հայ պատմագիրը փորձել է ազգային հոգեբանական հատկանիշները, պահանջումները, նույնիսկ կենցաղավարության յուրահատկությունները պայմանավորել բնական պատճառներով:

Ինչպես արդեն վերը նշվեց, Ֆրանսիացի մեծ հումանիստ ու մտածող Շ. Մոնտեսքյոն իբրև աշխարհագրական դետերմինիզմի տեսության հիմնադիր, սերտ կապ էր տեսնում տվյալ երկրի բնակլիմայական պայմանների ու նրա բնակիչների ֆիզիկական կառուցվածքի, հոգեկան կերտվածքի, հոգեբանական առանձնահատկությունների միջև և ըստ այդմ գրում է. «Մարդիկ պետք է մնան իրենց տեղերում, գոյություն ունեն լավ օդը վատով փոխարինվելուց ծագող հիվանդություններ, և այնպիսիք, որոնք առաջանում են պարզապես *կլիմայի փոփոխությունից*: Օդը, ինչպես և բույսերը, յուրաքանչյուր երկրում հազեցած են այդ երկրի հողի մասնիկներով: Այն մեզ վրա ազդում է այն աստիճան, որ նրանով է որոշվում մեր խառնվածքը: Տեղափոխվելով ուրիշ երկիր՝ մենք հիվանդանում ենք: Քանի որ մեր օրգանիզմի հեղուկ տարրերն ընտելացել են որոշակի համակազմվածքի,

⁹ Առաքել Դավրիժեցի, Գիրք Պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի, Եր., 1990, էջ 356:

¹⁰ Նույն տեղում, էջ 147:

¹¹ Նույն տեղում, էջ 355:

¹² Նույն տեղում, էջ 356:

իսկ կարծրերը՝ որոշակի կարգի, ուստի թե՛ մեկին և թե՛ մյուսին հատուկ է շարժման որոշակի աստիճան, ուրիշներին նրանք չեն դիմանում և ամեն կերպ դիմադրում են *նոր պայմաններին*¹³: Ավելին, նկարագրելով հայերի բռնի տեղահանումը Պարսկաստան, գրում է. «Մեծն Շահ Աբասը, ձգտելով թուրքերին զրկել սահմանների վրա մեծ բանակներ պահելու հնարավորությունից, զրեթե բոլոր *հայերին* զաղթեցրեց իրենց երկրից և Գիլանի նահանգ ուղարկեց ավելի քան քսան հազար ընտանիք, որոնք *կարճ ժամանակ անց զրեթե թողրն էլ ոչնչացան*»¹⁴: Անկարևոր չէ այն փաստը, որ Առաքել Դավրիժեցին, ամենայն մանրամասնությամբ նկարագրելով այդ նույն բռնագաղթը, թեև չի նշում Գիլանում այդքան հայերի բնակեցման ու ոչնչացման փաստը, բայց և այնպես զրեթե նույն պատճառաբանությամբ խստիվ դատապարտում է ժողովուրդների զանգվածային բռնի տեղահանումը ու նկարագրում, թե ինչպիսի հետևանքների է հանգեցնում տեղանքի ու կլիմայի փոփոխությունը մարդկանց ու ժողովուրդների հետագա կյանքում:

Դավրիժեցու հայտնած տեղեկության համաձայն՝ այդ բռնագաղթերի հետևանքով մեծ քանակությամբ զոհեր ու կորուստներ են տվել ոչ միայն հայ, այլ նաև մյուս ժողովուրդները:

Հայ պատմագիրը սրտի կսկիծով հայտնում է, որ կարճ ժամանակ անց տարագրյալների հիմնած շատ բնակավայրեր շուտով ամայացան: Այսպես, իր հիմնումից որոշ ժամանակ անց, տարրալուծվեց Մազանդարանի մեծ գաղթօջախը, որտեղ հայերը, վրացիները և այլք հազարներով մահանում էին հիվանդություններից ու սովից: Ըստ Դավրիժեցու՝ Մազանդարան բռնագաղթված տասը հազար ընտանիքից 1659 թ. մնացել էր ընդամենը 400-ը. «...*Առաել քան զԺՌ (10 000) տուն հայք գնացեալք էին. և այժմ Դճ (400) տուն հազի թէ մնացեալք են*»¹⁵: Նույն փաստի մասին հիշատակում են նաև XVII-XVIII դարերի ֆրանսիացի նշանավոր ճանապարհորդներ Ժան Շարդենը, Ժան-Բատիստ Տավերնյեն և ուրիշներ: Շարդենի համոզմամբ՝ Մազանդարան գաղթած 30 հազար հայ և վրացի ընտանիքներից 40 տարի անց մնացել էր միայն 400-ը¹⁶:

Ուշագրավ է, որ եթե Մոնտեսքյոն, իր բողոքի ձայնը բարձրացնելով ժողովուրդների բռնի տեղահանության անմարդկային երևույթի դեմ, հիմնականում անդրադարձել է հայ ժողովրդին, և ինչպես նշում է Հ. Միրզոյանը, դատապարտել է պարսից բռնակալի հրեշալին այդ ձեռնարկումը՝ անկախ նկատառումներից¹⁷, ապա Դավրիժեցին, քննադատելով ազգերի բռնի վերաբնակեցման յուրաքանչյուր երևույթ, մանրամասն անդրադարձել է նաև վրացի տարագիրներին: Վրաստանի պատմությանը վերաբերող գլուխներում բացվում են վրացիների հանդեպ Շահ Աբասի վարած նենգավոր քաղաքականության ներքին ծայրերը, քաղաքականություն, որի նպատակն էր վրաց թագավորների ու իշխանների բնաջնջումը և երկրի նվաճումն ու ստրկացումը: Առաքել Դավրիժեցին այս երկու պարագայում էլ փայլում է որպես պատմիչ և բռնակալների գաղտնի մտադրությունները պատկերծելու վարպետ:

Շարադրելով պատմական փաստեր, որոնք «վրաց երկրի ավերման» պատճառ դարձան, հայ պատմագիրը գրում է, որ Շահ Աբասի հրամանով Կախեթի զրեթե ողջ բնակչությունը տեղահանվեց ու տարվեց Պարսկաստան: Հավանաբար հենց բնակլիմայական էական տարբերությունների հետևանքով Իրան տեղափոխված վրացիների կորուստներն ավելի շատ են եղել, քան այլ ժողովուրդներինը, այդ թվում նաև՝ հայերինը: Հայ պատմագիրը ցավով հաղորդում է, որ Պարսկաստանի *անբարենպաստ կլիման* և այլևայլ դժվարությունները հատկապես վրացիներից մեծ քանակությամբ զոհեր խլեցին:

¹³ Ս. Монтескье. Персидские письма. М., 1956, с. 277.

¹⁴ Նույն տեղում, էջ 278:

¹⁵ Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 356:

¹⁶ Տե՛ս Լ. Դանելյան, Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր, Եր., 1978, էջ 170:

¹⁷ Տե՛ս Հ. Միրզոյան, Մոնտեսքյոն հայերի և Հայաստանի մասին, «Նորք», 1989, № 7, էջ 139:

Նկարագրելով Կախեթից տարագրված վրացիների հետագա պատմական ճակատագիրը՝ Դավրիժեցին վկայում է, որ չկարողանալով ընտելանալ Իրանի *բնակլիմայական պայմաններին*՝ վրաց ժողովուրդը «չաճեց այն երկրում», քանի որ «ոչ էին ընտելը գէջ և դաժան, շնչարգել և մզառետտ օդոյ երկրին. նա և ոչ ուտելեաց և ըմպելեաց, և այլ կենցաղավարութեան երկրին: Վասն որոյ սկսան կոտորիլ և մեռանիլ. և ի սակաւ ժամանակաւ այնքան կոտորեալ մեռան, հազիւ թէ ի տասնէն մէկն մնաց: Եւ այնք, որք մնացին՝ յետ ժամանակաց ի հիւանդութեանց և ի ցաւոց ճնշեալք և մաշեալք և ցաւագարեալք եղեն, որ ոչ կարէին գործ ինչ մարմնական գործել յօգուտ կենցաղավարութեան իրեանց»¹⁸: Դավրիժեցու վկայմամբ՝ Շիրազում և Ասուփաս կոչված վայրում հաստատված վրացիները «ևս սպառեցան պէս պէս կերպի»:

Թեև վերը ասվածը վերաբերում է վրաց ժողովրդին, սակայն նույնաման ճակատագրի են արժանացել գրեթե բոլոր բռնագաղթվածները անկախ կրոնական պատկանելիությունից: Ի դեպ, Դավրիժեցին այս կամ այն երևույթը նկարագրում է իբրև տիպական օրինակ նույնաման բոլոր իրողությունները հասկանալի դարձնելու համար:

«Աշխարհագրական դետերմինիզմի» դրսևորումները իրենց հետագա զարգացումը գտան հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ այդ տեսության մի շարք հետևողների երկերում: Օրինակ, Ս. Պալասանյանն այս ուղղությամբ այնքան հեռուն է գնացել, որ փորձել է ժողովուրդների ողջ հոգեկան ու ֆիզիկական հատկանիշները բացատրել կլիմայի ազդեցությամբ և ըստ այդմ նշել է, որ «կլիման գորատոր կերպով ազդում է իւրաքանչիւր ազգի կրօնի, լեզուի, վարք ու բարքի և մինչև մարմնի ու տիպարի կազմութեան վրայ, ... կլիմայի փոփոխութեամբ այդ ազգային յարկանիշները, մի քանի սերունդ անցնելուց յետոյ, տեղական նոր պայմանների համեմատ՝ զգալի փոփոխությունների են ենթարկվում ի վնաս ազգութեան կամ երբեմն նոյն իսկ ամբողջ մարդկութեան. փոխվում է ազգի վարքն ու բնատրոփիւնը, փոխվում է նորա ներքին կազմուածքն ու առողջութիւնը և այս ընդհանրական կերպարանափոխութիւնից ծնունդ առնում մի նոր կերպարանք, այսինքն մի ուրիշ ազգութիւն, կամ, որ աւելի հաւանական է, յատաջանում է ցեղի նուազում և կատարեալ սպառում»¹⁹:

Ընդհանրապես, աշխարհագրական տարածքը ազգային արժեք է շնորհիվ անկրկնելի պատմամշակութային առանձնահատկության և ազգային ոգու: Եվ եթե ընդունենք, որ «ժողովուրդների ամբողջ ապրելակերպը, պատկերացումների շրջանակը, մարմնի կառուցվածքը...» ամենը պայմանավորված է *կլիմայով*, ապա «խլելով այդ ամենը՝ նրանցից կխլեք ամեն ինչ»²⁰:

Հայ պատմագիրը, լինելով նախ և առաջ XVII դարի ներկայացուցիչ, երբ մարդկանց գիտակցությունը դեռևս կաղապարված էր միջնադարյան աշխարհի ճանաչմամբ, չէր կարող հստակ ըմբռնել, առավել ևս ներկայացնել այն աշխարհագրական ու բնակլիմայական գործոնները, որոնք վճռորոշ ու էական դեր են խաղում ժողովուրդների կյանքում: Սակայն, որպես իր ժամանակի կրթված անձանցից մեկը՝ Դավրիժեցին կարողացել է, թեկուզև տարերայնորեն, բացահայտել ու նկարագրել աշխարհագրական միջավայրի ու բնական պայմանների տեղն ու դերը ոչ միայն առանձին անհատների, այլև ամբողջ ժողովուրդների պատմական կյանքում: Այլ կերպ ասած՝ Դավրիժեցին փորձել է ցույց տալ, որ աշխարհագրական դետերմինանտները, ի թիվս այլոց, նույնպես վճռորոշ դեր են խաղում մարդկանց կյանքում, իսկ առանձին դեպքերում՝ նույնիսկ պայմանավորում ժողովուրդների հետագա պատմական ճակատագիրը: Ավելին, եթե Մոնտեսքյոյի աշխարհագրական դետերմինիզմը XVIII դ. պայմաններում հասարակության աստվածաբանական տեսանկյունից հրաժարվելու ճանապարհին սոցիալ-փիլիսոփայական մտքի խոշոր ձեռքբերում

¹⁸ Առաքել Դավրիժեցի, նշվ., աշխ., էջ 137-138:

¹⁹ Ս. Պալասանյան, Գաղթականության խնդիրը, «Փորձ», 1877-1878, № 4, էջ 199:

²⁰ И. Г. Гердер. Идеи к философии истории человечества. М., 1977, с. 175.

էր, ապա ֆրանսիացի լուսավորչի տեսության հետ առնչվող հայ պատմագրի գաղափարները ոչ այլ ինչ էին, քան XVII դարի հայ իրականության մեջ նոր շրջանի ոգու արտահայտություն:

Л. Г. СААКЯН - Элементы географического детерминизма в "Истории" Аракела Даврижеци. - На основе изучения "Истории" выдающегося армянского историографа XVII века Аракела Даврижеци в статье рассматриваются элементы географического детерминизма, содержащиеся в его труде. Исходя из этого делается вывод, что Даврижеци, будучи одним из образованнейших людей своего времени, смог выявить и представить место и роль географических факторов и природно-климатических условий в исторической жизни не только отдельных людей, но и целых народов.